

5 սեպտեմբերի, 2019թ.

**Չայրենիքի կարոտը մեր օրերում. արտերկրում սովորող ուսանողները ձգտում են «հայրենիքի ձայնին»**

- Արտերկրում սովորող ուսանողների 74%-ը նշում է, որ ամենից շատ կարոտում է հայրենիքին բնորոշ ձայները, նույնիսկ եթե ընտանիքի հետ առցանց ճաշում է կամ կանոնավոր շփվում հեռախոսային հավելվածների միջոցով,
- Այնուամենայնիվ, չնայած դժվարություններին, որոնք ի հայտ են գալիս սկզբանական փուլում, նրանց մեծ մասը (99%) համաձայն է, որ արտերկրում սովորելը տևական դրական ազդեցությունն ունի,
- HSBC-ն ստեղծել է «Չայրենիքի ձայնը» (*Sounds of Home*) նախագիծը՝ ձայնագրությունների շարք Apple Music, Deezer, IMVU, iTunes, Musical.ly հարթակների համար: Այն արտերկրում սովորող ուսանողներին տեղափոխում է հայրենիք:

HSBC-ի ուսումնասիրության համաձայն՝ ընտանիքի և ընկերների հետ կապը պահելու համար արտերկրում ուսանողների մեծ մասն (97%) օգտվում է տեսազանգերից, Instagram, WeChat և WhatsApp հարթակներից, որոնց միջոցով նրանք մասնակցում են առցանց ընտանեկան ընթրիքներին և տեղեկանում ընկերների կյանքում վերջին փոփոխություններին. բայց և այնպես նրանք շարունակում են կարոտել հայրենիքը: Ուսանողների 55%-ն օգտվում է WhatsApp –ից կամ տեսազանգերից, 50%-ը՝ ֆեյսբուքից, իսկ 21%-ը՝ WeChat-ից:

Ուսանողների 92%-ն ասում է, որ արտերկրում սովորելիս կարոտում է հայրենիքի միջավայրը. 10-ից 6-ը (57%) նշում է, որ ամենից շատ կարոտում է զգայական փորձառությունները, իսկ երեք չորրորդը (74%) կարոտում է հենց ձայնային միջավայրը: Միջազգային ուսանողները նշում են, որ ամենից շատ կարոտում են մայրենի լեզուն (50%), շուկաների եռուզեռը (26%), հանրային տրանսպորտի աղմուկը (25%), թռչունների ճուլոյունը, միջատների կամ կենդանիների (20%) արձակած հնչյունները:

Որպեսզի արտերկրում սովորող ուսանողները կարողանան իրագործել իրենց նպատակը և պահեն կապը հայրենիքի հետ, HSBC-ն թողարկել է «Չայրենիքի ձայնը/Sounds of Home» նախագիծը՝ աշխարհի տարբեր երկրներին բնորոշող հնչյունների ձայնագրություններ, որը մշակել են արտերկրում ուսում ստացած հայտնի մարդիկ: Նախագծում տեղ գտած ձայնագրությունները հասանելի են Apple Music, Deezer, IMVU, iTunes, Musical.ly հարթակներում: HSBC-ն նաև տեսագրել է հիշողություններ արթնացնող հնչյունների ձայնագրման ու մշակման ընթացքը, որի համար կարող եք այցելել [youtube](https://www.youtube.com/watch?v=...) :

Արտերկիր տեղափոխվելը հետաքրքիր փորձառություն է ուսանողների համար, որոնք (99%) նշում են, որ այն երկարատև դրական ազդեցություն է ունենում իրենց կյանքի վրա, սակայն որոշ ժամանակ է պահանջվում հարմարվելու համար: Արտերկրում սովորող ուսանողներից հինգից երկուսը (43%) առնվազն շաբաթը մեկ անգամ կամ ավելի հաճախ հայրենիքի հանդեպ կարոտ է զգում, նրանց գրեթե կեսն (49%) ասում է, որ ընտանիքի ու ընկերների հանդեպ կարոտն ազդել է ուսման վրա, իսկ հինգից երկուսը (40%) նշում է, որ այն ազդել է քնի

վրա: Հայրենիքի հանդեպ կարոտն ամենից հաճախ առաջ է գալիս գիշերային ժամերին՝ հասկապես 22:00-ից 24:00 ընկած ժամանակահատվածում:

**Բարոնուհի Սյուզան Գրինֆիլդը՝ Օքսֆորդի համալսարանի նախկին ուսանող և Nero-Bio ընկերության գլխավոր տնօրենը, նշում է.**

«Արտերկրում սովորող ուսանողները ծնվել են թվային դարաշրջանում, որը միավորում է մարդկանց, բայց նրանց մեծ մասը կարոտում է իրենց ծանոթ կենսակերպը: Թեև երիտասարդ սերունդը չի ապրում զուգահեռ իրականությունում, դժվարությունը ընտանիքի, ընկերների, հարազատ միջավայրի ու լեզվի բացակայությունը լրացնելու մեջ է:

Ձայնն ու հոտն ավելի ազդեցիկ են, քան մյուս երեք զգայական ընկալումները, ամենատարածվածն ու ամենաքիչ շոշափելին: Միգրացե, հայրենիքը կարոտելիս հնչյունները կարևոր դեր են խաղում, քանի որ դրանք բարդ է տեղավորել մեկ հիշողության սահմաններում. դրանք առավել մեծ ազդեցություն ունեն մեր գիտակցության վրա: Հնչյուններն օգնում են երևակայել, մտքում մշակել քո անձնական սցենարը: Սա նշանակում է, որ դրանք կարող են օգտագործվել սեփական ինքնազգացողությունը բարելավելու նպատակով»:

Չնայած դժվարություններին՝ օրինակ՝ հյուրընկալող երկրում բանկային հաշիվ բացելուն (35%) կամ հայրենիք ճամփորդելու համար գումար խնայելուն՝ (40%) ինքնուրույնությունն ու նոր փորձառությունները համարվում են արտերկրում սովորելու հիմնական առավելությունները (60%): Արտերկրում սովորող ուսանողների 84%-ը կարծում է, որ ոչ միայն նոր հմտություններ է ձեռք բերել, այլև ներքուստ ավելի ուժեղ է դարձել:

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն Փոլ Էդգարը նշում է. «Արտերկրում սովորելիս նոր հնարավորություններ բացահայտելը հետաքրքիր գործընթաց է, դու դառնում ես առավել վստահ և ընդլայնում ես մտահորիզոնդ: Այնուամենայնիվ, միանգամայն նոր միջավայրն արթնացնում է ընտանիքի և ընկերների հետ կապված հիշողություններ: Որպես արտերկրում սովորած և ապրած մարդ՝ ես գիտեմ, թե ինչ է նշանակում հայրենիքի կարոտը:

«Հայրենիքի ձայնը» նախագիծը ստեղծվել է՝ օգնելու համար արտերկրում սովորող ուսանողներին պահել կապը հայրենիքի հետ: Ծանոթ հնչյուններ լսելով՝ նրանք ավելի մոտ են զգում հարազատներին: Ֆինանսական հարցերում աջակցություն տրամադրելուց բացի, սա նոր հարթակ է, որի միջոցով HSBC-ն օգնում է արտերկրում սովորող ուսանողներին անցնել այս բարդ փորձառության միջով, կայանալ և ուսումից քաղել առավելագույնը»:

**Արտերկրում հայ ուսանողների թիվն աճում է**

2018թ. դրությամբ միջպետական ծրագրերով արտերկրում սովորում էր 206 հայ ուսանող՝ հիմնականում Ռուսաստանում, Վրաստանում, Ռումինիայում, Բուլղարիայում, Լեհաստանում, Չինաստանում և Հորդանանում: Նրանցից 92-ը<sup>1</sup> սովորում էր բակալավրի, իսկ 114-ը<sup>2</sup>՝ մագիստրոսական կրթական ծրագրերով: 2017թ. միջպետական համաձայնագրերի շրջանակում արտերկրում սովորող հայ ուսանողների թիվը կազմում էր 183<sup>3</sup>: Համաձայն Հայաստանում FLEX ծրագրի ղեկավար Հռիփսիմե Մանուկյանի՝ այս տարի ԱՄՆ

<sup>1</sup> [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf), 296  
<sup>2</sup> [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf), 307  
<sup>3</sup> [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf), 296,307

կառավարության մշակութային ու կրթական փոխանակման ծրագրերով Ամերիկայի տարբեր նահանգներում ուսում է ստացել ավելի քան 40 հայ ուսանող:

2018թ. «Erasmus+» Եվրոպական միության՝ կրթության, վերապատրաստման, երիտասարդության և սպորտի հարցերով ծրագրի միջոցով 261<sup>4</sup> հայ և արտերկրացի ուսանող փոխանակել են համալսարանները: Հայ ուսանողները սովորել են տարբեր եվրոպական երկրներում՝ հատկապես Լեհաստանի, Իսպանիայի և Իտալիայի համալսարաններում, իսկ արտերկրացի ուսանողները՝ Երևանի պետական համալսարանում, Հայաստանի ազգային ազգային համալսարանում և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում<sup>5</sup>:

Հայաստան կրթական նպատակով այցելում են արտերկրացի ուսանողներ հիմնականում Ռուսաստանից, Հնդկաստանից և Վրաստանից<sup>6</sup>: 2018-2019թթ. ուսումնական տարում Հայաստանի պետական կրթական հաստատություններում սովորում էր 2925 արտերկրացի ուսանող<sup>7</sup>, իսկ մասնավոր հաստատություններում՝ 1370<sup>8</sup>: Անցած տարի բակալավորի ծրագրով Հայաստանում սովորում էր 217 հայ ուսանող հիմնականում Ռուսաստանից, Վրաստանից ու Սիրիայից<sup>9</sup>: Մագիստրոսական ծրագրով սովորող արտերկրացի ուսանողների թիվը համեմատաբար ավելի փոքր է՝ ընդամենը 308<sup>10</sup>: 2018թ. նրանք մագիստրոսական ծրագրով ուսումնասիրում էին սոցիալական գիտություններ, բիզնեսի կառավարում և իրավագիտություն:

### **«Հայրենքի ձայնը» ուսումնասիրության մասին**

*«Հայրենքի ձայնը»* HSBC-ի պատվերով իրականացված անկախ հետազոտություն է արտերկրում սովորող ուսանողների փորձառության մասին: Այն հեղինակավոր ուսումնասիրություն է ուսանողների՝ Նոր երկիր տեղափոխվելու զգացողությունների, հայրենքի նկատմամբ կարոտի ընկալման ու օտար երկրում ապրելու փորձառության մասին:

Ուսումնասիրությունը ներկայացնում է արտերկրում սովորող 11 երկրներից ու տարածաշրջաններից (Ավստրալիա, Չինաստան, Ֆրանսիա, Գերմանիա, Հոնկոնգ, Հնդկաստան, Մալայզիա, Սինգապուր, Թայվան, Միացյալ Թագավորություն և ԱՄՆ) 897 ուսանողի կարծիքը:

Հարցումների համար հիմք են ծառայել 17-29 տարեկան ուսանողների կարծիքները, ովքեր ներկայումս սովորում կամ վերջին հինգ տարիների ընթացքում սովորել են արտերկրում: Հարցումներն իրականացվել են 2019թ. հունիսի 12-24-ը:

### **HSBC Խումբ**

*HSBC Holdings plc-ը՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 65 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2019թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել են 2,751 միլիարդ ԱՄՆ դոլար:*

### **HSBC Հայաստան**

*«Էլչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը հիմնադրվել է 1996թ-ին: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարի: Էլչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 8 գրասենյակների և մոտ 392 աշխատակիցների միջոցով: 2018թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 268 միլիարդ*

<sup>4</sup> <https://erasmusplus.am/statistics/>

<sup>5</sup> [https://erasmusplus.am/home/wp-content/uploads/2019/01/ICM-2018\\_Armenian-HEIs.pdf](https://erasmusplus.am/home/wp-content/uploads/2019/01/ICM-2018_Armenian-HEIs.pdf)

<sup>6</sup> [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf), ք229

<sup>7</sup> [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf), ք229

<sup>8</sup> [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf), ք236

<sup>9</sup> [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf), ք17

<sup>10</sup> [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf), ք304

ՀՀ դրամ ներառյալ ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ ՓԻ-ԷԼ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը:

- Վերջ/վերջ-